

## ԵՆԹԱԴՐՅԱԼ ՀԱՆՑԱՆՔ ԿԱՏԱՐԱԾ ԱՆՁԻ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՀԱՐՈՒՑՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ

### Տիգրան Ղազարյան

*ԵՊՀ քրեական դատավարության և  
կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ*

Գործող քրեադատավարական կարգավորումների համաձայն՝ քրեական գործ հարուցելու առիթի և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելու մասին: ՀՀ քրեական դատավարությունում քրեական գործը հարուցվում է քրեական օրենսգրքով չթույլատրված, ենթադրաբար կատարված հանցակազմի հատկանիշներ պարունակող արարքի (արարքների) կապակցությամբ, այլ կերպ՝ փաստի առթիվ, իսկ անձի նկատմամբ քրեական գործ հարուցելու ինստիտուտ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ: Հետևաբար քրեական գործ հարուցելու մասին որոշումը օրենքին համապատասխան կայացնելու դեպքում որևէ անձի իրավունքները և օրինական շահերը չեն խախտվում:

Չնայած դրան՝ իրավակիրառ պրակտիկայում քրեական գործ հարուցելու որոշման մեջ հաճախ որպես հանցագործություն կատարող մատնանշվում է որոշակի անձ, ընդ որում որպես մեղադրյալ ներգրավելու որոշման կամ նույնիսկ մեղադրական դատավճռին բնորոշ հաստատական ձևակերպումներով՝ առաջացնելով կոնկրետ իրավական հետևանքներ այդ անձի համար: Ուստի քրեական վարույթ նախաձեռնելու փուլի ուսումնասիրման համատեքստում կարևոր է անդրադառնալ նաև ներկայացված խնդրի քննությանը:

Նախևառաջ անհրաժեշտ ենք համարում նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածով օրենսդիրը հստակ սահմանել է «քրեական գործ», «քրեական հետապնդում» և «քրեական հետապնդման հարուցում» հասկացությունները: Այսպես, քրեական գործը քրեական հետապնդման մարմնի կողմից իրականացվող առանձին վարույթն է՝ քրեական օրենսգրքով չթույլատրված մեկ կամ մի քանի ենթադրաբար կատարված արարքների կապակցությամբ (6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ): Մինևույն ժամանակ քրեական հետապնդումը բնորոշել է որպես այնպիսի դատավարական գործողությունների համակցություն, որոնք իրականացնում են քրեական հետապնդման մարմինները, իսկ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում տուժողը, նպատակ ունենալով բացահայտել քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը կատարած անձին, վերջինիս մեղավորությունը հանցանքի կատարման մեջ, ինչպես նաև ապահովել այդպիսի անձի նկատմամբ պատժի և հարկադրանքի այլ միջոցներ կիրառելը (6-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետ), իսկ քրեական հետապնդման հարուցումը քրեական հետապնդման մարմնի որոշումն է անձին որպես մեղադրյալ ներգրավելու, ինչպես նաև մինչև այդ նրան ձերբակալելու կամ նրա նկատմամբ խափանման միջոց կիրառելու մասին (6-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետ):

Վերոգրյալ հասկացությունների համակարգային վերլուծությունը վկայում է այն մասին, որ քրեական գործի հարուցմամբ սկսվում է քրեադատավարական այն վարույթը, որի շրջանակներում իրավասու մարմինն իրավունք է ստանում ձեռնարկել օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները հանցագործությունը և այն կատարած անձանց բացահայտելու ուղղությամբ: Միայն քրեական գործ հարուցելուց հետո է վարույթն իրականացնող մարմինն օժտվում քննչական և դատավարական

գործողություններ կատարելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված լայն լիազորություններով և իրավունք ստանում միջամտելու անձանց իրավունքներին և օրինական շահերին, անհրաժեշտության դեպքում՝ նրանց նկատմամբ կիրառելու դատավարական հարկադրանքի միջոցներ և այլն: Այլ կերպ՝ քրեական գործ հարուցելու մասին որոշումը իրավաբանական փաստ է, որը նշանավորում է կոնկրետ քրեական գործի քննության սկիզբը<sup>1</sup>:

Այսպիսով, քրեական գործի հարուցելու մասին որոշմամբ՝

ա) պաշտոնապես ազդարարվում է հանցագործության, դրա հանգամանքների բացահայտման, այն կատարած անձանց մերկացմանն ուղղված պետական մարմինների գործունեության սկիզբը,

բ) դրվում է այն իրավական հիմքը, որը թույլ է տալիս օրենքով նախատեսված դեպքերում և օրենքով սահմանված կարգով սահմանափակել անձանց իրավունքներն ու օրինական շահերը, հարկադրանք կիրառել նրանց նկատմամբ և այլն:

Օրենսդիրը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածում սահմանել է քրեական գործ հարուցելու որոշման ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները: Մասնավորապես ամրագրվել է, որ քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ պետք է նշվեն քրեական գործ հարուցելու առիթն ու հիմքը, քրեական օրենքի այն հոդվածը, որի հատկանիշներով հարուցվում է քրեական գործը, հանցագործությունից տուժած անձը, հարուցելուց հետո՝ գործի ընթացքը և այլն:

Վերոգրյալ քրեադատավարական իրավանորմերի վերլուծությունից կարող ենք հանգել հետևության, որ քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ ենթադրյալ հանցանք կատարած անձի մասին որևէ նշում կատարելու պահանջ նախատեսված չէ: Դրա պատճառը ոչ միայն այն է, որ քրեական գործ հարուցելու մասին որոշման նշանակություն անձին կարգավիճակ տալը կամ մեղադրանք առաջադրելը չէ, այլ նաև այն, որ այդ որոշման կայացման համար ապացույցների որոշակի ծավալ օրենքով չի պահանջվում: Ավելին, այդ փուլում ապացուցումն իրականացվում է միայն քրեական գործ հարուցելու համար անհրաժեշտ հիմքերի (առավելապես օբյեկտիվ կողմի առերևույթ առկայությունը) բավարարությունը պարզելու նպատակով, այլ ոչ թե ենթադրաբար հանցանք կատարած անձին կարգավիճակ տալու կամ մեղադրանք առաջադրելու համար:

Տեղին է հիշատակել նաև Վ.Մ. Բիկովի դիրքորոշումն առ այն, որ հանցագործության մասին հաղորդման ստուգումը որպես հետաքննության մարմնի, հետաքննիչի, քննիչի և քննչական մարմնի ղեկավարի՝ քրեադատավարական օրենքով կարգավորվող գործունեությունն ուղղված է ապացույցների հավաքմանը, ստուգմանը և գնահատմանը՝ քրեական գործ հարուցելու կամ մերժելու մասին որոշման համար առիթների և հիմքերի առկայությունը կամ բացակայությունը հաստատելու նպատակով<sup>2</sup>: Ի.Վ. Օվսյաննիկովի կարծիքով՝ ստուգումը նախատեսված է հանցագործության վերաբերյալ հաղորդումը գնահատելու համար՝ հանցագործության հատկանիշները հաստատելու նպատակով<sup>3</sup>: Հանցագործության մասին հաղորդումն ստուգվում է նախնական տեղեկատվության համապարփակ և օբյեկտիվ ուսումնասիրության, վերլուծության և գնահատման համար: Այս նպատակով

<sup>1</sup> Տե՛ս **Դիլբանդյան Ս.Ա.** Անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովումը ՀՀ քրեական դատավարության մինչդատական վարույթում: ԵՊՀ- ԵՊՀ հրատ., Եր., 2011, էջ 129:

<sup>2</sup> Տե՛ս **Быков В.М.** Новый закон о порядке рассмотрения следователем и дознавателем сообщения о преступлении // Российская юстиция. – 2013. – № 5. էջ 24-30:

<sup>3</sup> Տե՛ս **Овсянников И.В.** Рассмотрение сообщений о преступлениях. Процессуальные и криминалистические проблемы: научно-практическое и учебное пособие. – М.: Юрлитинформ. – 2010թ., էջ 85:

լիազորված պաշտոնատար անձինք իրականացնում են դատավարական և քննչական մի շարք գործողություններ, պարզվում է քրեական գործի քննության և որոշում ընդունելու համար նյութաիրավական և դատավարական նախադրյալների առկայությունը կամ բացակայությունը:

Ընդգծենք նաև, որ մինչև քրեական գործի հարուցումը ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը դատավարական որոշակի կարգավիճակներ չի առանձնացնում: Անձը այս կամ այն դատավարական կարգավիճակը ձեռք է բերում և համապատասխանաբար դրանից բխող իրավունքներն ու պարտականությունները ստանձնում է միայն քրեական գործ հարուցվելուց հետո: Ուստի թե՛ մարդու իրավունքների պաշտպանությունն ապահովելու և թե՛ քրեական գործ հարուցելու փուլում ապացուցման առարկայի առանձնահատկություններով պայմանավորված՝ օրենսդիրն այդ փուլում քննչական և դատավարական սահմանափակ թվով գործողությունների կատարում է թույլատրում: Անձին կարգավիճակ տալու կամ մեղադրանք առաջադրելու հիմքերի պարզումը (ամբողջ ծավալով ապացուցում իրականացնելը) արդեն իսկ հարուցված քրեական գործով իրականացվող հետագա վարույթի խնդիր է, որի շրջանակներում թույլատրվում է կատարել քննչական և դատավարական տարբեր գործողություններ, կիրառել դատավարական հարկադրանքի միջոցներ և այլն:

Հիշյալ հարցին անդրադառնալով՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ այն դեպքում, երբ քրեական գործ հարուցելու մասին որոշմամբ հաստատված է համարվում կոնկրետ անձի կողմից քրեորեն պատժելի որևէ արարք կատարելու փաստը, այլ խոսքով՝ քրեական գործ հարուցելու մասին որոշման նկարագրական-պատճառաբանական կամ եզրափակիչ մասերում առկա ձևակերպումներից ուղղակիորեն հետևում է, որ անձը կատարել է քրեորեն պատժելի արարք, քննարկվող որոշումն իրավական հետևանքների առումով հավասարվում է անձին մեղադրանք առաջադրելու մասին որոշմանը<sup>1</sup>: Այս եզրահանգումը հիմնված է ինչպես քրեադատավարական գործող իրավակարգավորումների, այնպես էլ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետում կիրառվող՝ «քրեական մեղադրանք» հասկացության կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) կողմից ձևավորված նախադեպային իրավունքի վրա, որի համաձայն՝ «քրեական մեղադրանք» եզրույթը պետք է հասկացվի ոչ թե ձևական (փաստաթղթային), այլ *բովանդակային* (գործնական) իմաստով: «Մեղադրանք» հասկացությունը կարող է սահմանվել որպես իրավասու մարմնի կողմից անձին պաշտոնապես արված տեղեկացում այն մասին, որ առկա է նրա կողմից քրեորեն հետապնդելի արարք կատարելու վերաբերյալ ենթադրություն<sup>2</sup>: Այսինքն՝ անձի նկատմամբ մեղադրանքի առկայության մասին կարող է վկայել նաև այնպիսի միջոցներ ձեռնարկելը, որոնք ենթադրում են հանցագործության մեջ կասկածանքի առկայություն, ինչպես նաև էականորեն ներգործում են կասկածվող անձի դրության վրա<sup>3</sup>: Ընդ որում, մինչդատական վարույթի նկատմամբ Կոնվենցիայի 6-րդ հոդվա-

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0136/11/11 որոշում:

<sup>2</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Ղևեերն ընդդեմ Բելգիայի (*Deweere v. Belgium*) գործով վճիռ, 1980թ. փետրվարի 27, գանգատ թիվ 6903/75, կետեր 44, 46:

<sup>3</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Էկլեն ընդդեմ Գերմանիայի* (*Eckle v. Germany*) գործով վճիռ, 1982թ. հուլիսի 15, գանգատ թիվ 8130/78, կետ 73, *Շուբինսկին ընդդեմ Սլովենիայի* (*Šubinski v. Slovenia*) գործով վճիռ, 2007թ. հունվարի 18, գանգատ թիվ 19611/04, կետ 62, *Գ.Կ.-ն ընդդեմ Լեհաստանի* (*G.K. v. Poland*) գործով վճիռ, 2004թ. հունվարի 20, գանգատ թիվ 38816/97, կետ 98):

ծի 1-ին և 3-րդ կետերի կիրառման եղանակը պայմանավորված է տվյալ վարույթի առանձնահատկություններով<sup>1</sup>:

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ նշված խնդիրն ունի ոչ միայն քրեադատավարական, այլ նաև քրեաիրավական հիմքեր: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասով նախատեսված մի շարք հանցագործությունների համար պարտադիր է հատուկ սուբյեկտի առկայությունը, որի պայմաններում օբյեկտիվորեն անհնար է հարուցել քրեական գործ առանց քրեական հետապնդում իրականացնելու, առանց տվյալ անձի վերաբերյալ տեղեկություններ ներառելու: Օրինակ՝ պաշտոնատար անձի կողմից կաշառք ստանալը, պաշտոնական լիազորությունները չարաշահելը և այլն:

Մատնանշված դեպքերում որպես խնդրի լուծման առավել ընդունելի տարբերակ, որի պայմաններում արդյունավետորեն կկենսագործվի անձի պաշտպանության իրավունքը, կարող է ծառայել վարույթն իրականացնող մարմնի համար քրեական գործ հարուցելու որոշում կայացնելու մասին ենթադրյալ հանցանք կատարած անձին տեղեկացնելու պարտականություն սահմանելն անկախ այն հանգամանքից, թե այդ պահին տվյալ անձը քրեադատավարական առումով կարգավիճակ ունի, թե ոչ: Նշված իրավագործության իրականացումը անհրաժեշտ է նաև տվյալ անձի իրավունքների և օրինական շահերի անհարկի սահմանափակումները կանխարգելելու տեսանկյունից՝ նպաստելով քրեական գործի լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությանը: Դրա անհրաժեշտության մասին բազմիցս խոսել է նաև պրոֆեսոր Բ.Յ. Գավրիլովը<sup>2</sup>:

Հիշյալ հարցի կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի («ա») ենթակետի դրույթները թելադրում են շահագրգռված անձին «մեղադրանքի» մասին տեղեկացնելու հարցում ցուցաբերել ծայրահեղ զգուշավոր մոտեցում: Մեղադրական եզրակացությունը վճռորոշ դեր է խաղում քրեական հետապնդման մեջ. դրա հանձնման պահից մեղադրվող անձը համարվում է իրեն ներկայացված մեղադրանքի փաստական և իրավական հիմքերի մասին պաշտոնապես և գրավոր ձևով տեղեկացված<sup>3</sup>:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ, հանրային շահից ելնելով, վարույթն իրականացնող մարմինը պետք է հետևողականորեն պահպանի մասնավոր և հանրային շահերի միջև ողջամիտ հավասարակշռությունը: Մասնավորապես, առաջարկվող լուծումների համաչափությունը իրավաչափ շահերի հավասարակշռման տեսանկյունից այն է, որ որոշակի գործի շրջանակներում վարույթն իրականացնող մարմինը պետք է գիտակցի՝ անձի նկատմամբ քրեական գործ հարուցելիս պարտավոր է լինելու այդ մասին տեղեկացնելու նրան, ինչը կարող է էականորեն խոչընդոտել գործի քննությունը՝ հանգեցնելով նախաքննության շահերի անտեսմանը: Մյուս կողմից, վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ապահովել, որ արհեստականորեն չսահմանափակվեն անձի իրավունքներն ու օրինական շահերը:

Մասնավորապես, օրենսդիրը նախատեսել է մի շարք քննչական գործողությունների (օրինակ՝ հեռախոսային խոսակցությունները լսելը, բնակարանի խուզարկությունը և այլն) կատարման հատուկ կարգ՝ ըստ բնույթի և նպատակի, որը թույլ է

<sup>1</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Շաբելնիկն ընդդեմ Ուկրաինայի (Shabelnik v. Ukraine)* գործով վճիռ, 2009թ. փետրվարի 19, գանգատ թիվ 16404/03, կետ 52:

<sup>2</sup> Տե՛ս **Гаврилов Б.Я.** Актуальные проблемы защиты конституционных прав и свобод личности в досудебном производстве: монография. – М.: Академия управления МВД России, 2012. էջ 252-254:

<sup>3</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Կամասինսկին ընդդեմ Ավստրիայի գործով վճիռ, 1989 թ. դեկտեմբերի 19, գանգատ թիվ 9783/82, կետ 79:

տալիս ապահովել դրանց անհապաղությունն ու զաղտնիությունը: Ուստի գտնում ենք, որ այն դեպքերում, երբ քրեական գործի քննության հանրային շահից ելնելով անհրաժեշտ է, որ ենթադրյալ հանցանք կատարած անձը տեղեկացված չլինի իր նկատմամբ հարուցված քրեական գործի մասին, ապա արդարացված է, եթե վարույթն իրականացնող մարմինը քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ զերծ մնա այնպիսի ձևակերպումներից, որոնք կհանգեցնեն այդ մասին ծանուցելու պարտականություն ի հայտ գալուն: Դա կապահովի հետագա քննչական գործողությունների հանկարծակիությունը, ինչպես նաև կնվազի գործի քննության համար նշանակություն ունեցող առարկաները, փաստաթղթերը և այլ նյութերը համապատասխան անձանց կողմից ոչնչացնելու կամ թաքցնելու, ինչպես նաև հետախուզվող, հանցագործության մեջ կասկածվող անձանց թաքնվելու հավանականությունը: Միևնույն ժամանակ չեն սահմանափակվի անձի իրավունքներն ու օրինական շահերը, քանի որ քրեական գործը կհարուցվի փաստի առթիվ, այլ ոչ թե անձի նկատմամբ:

Վերոգրյալից բացի, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի («ա») ենթակետի դրույթները մեղադրյալին իրավունք են վերապահում տեղեկացված լինելու ոչ միայն մեղադրանքի համար առիթ դարձած նյութական փաստերի, այլ նաև այդ փաստերի մանրամասն իրավական որակման մասին<sup>1</sup>:

Եվրոպական դատարանի արտահայտած դիրքորոշմամբ՝ ներկայացված մեղադրանքի, հետևաբար՝ դատարանի կողմից դրա հնարավոր իրավական որակման մասին մեղադրյալի ճշգրիտ և լրիվ տեղեկացումը քրեական դատավարությունում արդար դատաքննության էական նախապայման է<sup>2</sup>: Չէ՞ որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի («բ») ենթակետի մասով բերված բողոքի վերաբերյալ Եվրոպական դատարանը գտել է, որ («ա») և («բ») ենթակետերը կապված են միմյանց հետ, և որ մեղադրանքի բնույթի և առիթների մասին տեղեկացված լինելու իրավունքը պետք է դիտել պաշտպանության նախապատրաստության իրավունքի լույսի ներքո<sup>3</sup>:

Մ.Ս.Ստրոգովիչն իրավացիորեն ընդգծել է, որ այս դեպքում ստեղծվում է օրինականության սկզբունքի տեսանկյունից անորոշ և անթույլատրելի իրավիճակ, այն է՝ անձը կասկածյալ կամ մեղադրյալ չէ քրեական գործով, սակայն նրա անունը՝ որպես հանցանք կատարողի, ուղղակիորեն մատնանշված է քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ: Ակնհայտ է, որ դա ուղղակիորեն վերաբերում է նրան<sup>4</sup>:

Նման դիրքորոշում ունի նաև Տ.Ն.Մոսկալկովան, որի կարծիքով հանգամանքները, որոնք հաստատում են, որ հանցագործությունը կատարել է այս կամ այն անձը, ենթակա են դեռևս ապացուցման նախաքննության փուլում<sup>5</sup>: Միաժամանակ գործնականում որոշ հանցակազմերի դեպքում, ինչպես արդեն նշել ենք, անհնար է հանցագործության մասին դատողություն անել առանց նշելու ենթադրյալ հանցանք կատարած անձը, օրինակ, պաշտոնական հանցագործություն կատարելու դեպքում, կալանքի տակ գտնվելու ժամանակ փախուստի դիմելու դեպքում և այլն<sup>6</sup>:

Համաձայն լինելով այդ դիրքորոշմանը՝ գտնում ենք, որ քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ անձին որպես հանցանք կատարողի մատնանշելիս այդ

<sup>1</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Պելիսիերն ու Սասին ընդդեմ Ֆրանսիայի գործով վճիռ, 1999 թ. ապրիլի 25, գանգատ թիվ 25444/94, կետ 51:

<sup>2</sup> Տե՛ս նույն որոշման 52-րդ կետը:

<sup>3</sup> Տե՛ս նույն որոշման 54-րդ կետը:

<sup>4</sup> Տե՛ս **Строгович М.С.** Курс советского уголовного процесса. Т. 2. Порядок производства по уголовным делам по советскому уголовно-процессуальному праву. - М., 1970. էջ 12:

<sup>5</sup> Տե՛ս **Москалькова Т.Н.** Честь и достоинство: как защитить? (Уголовно-процессуальный аспект). - М., 1992. էջ 35:

<sup>6</sup> Տե՛ս **Карцев А.В.** К вопросу о необходимости наделения лица статусом подозреваемого при возбуждении в отношении него уголовного дела // Российский судья. 2007. № 3. էջ 28:

մասին նրան տեղեկացնելն ուղղակիորեն առնչվում է մեղադրյալի (կասկածյալի) պաշտպանության իրավունքի քրեադատավարական հիմնարար սկզբունքին, որը նաև Կոնվենցիայով երաշխավորված «զենքերի հավասարության» և ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ ամրագրված մրցակցության սկզբունքների ապահովման կարևորագույն երաշխիք է: Մեղադրյալի (կասկածյալի) պաշտպանության իրավունքը նրան վերապահված դատավարական իրավունքների ամբողջությունն է, որը նրան հնարավորություն է տալիս հանդես գալու որպես դատավարության ինքնուրույն սուբյեկտ, լրիվ կամ մասնակիորեն հերքել իրեն վերագրվող հանցանքը կատարած լինելու պնդումը, ինչպես նաև պաշտպանելու իր իրավունքներն ու օրինական շահերը: Պաշտպանության իրավունքն անձի համար գործուն «զենք» է՝ դիմակայելու իշխանական լիազորություններով օժտված պետական մարմինների գործողություններին: Իր նկատմամբ կայացված քրեական գործ հարուցելու որոշման մասին տեղեկացված լինելն անձի համար առնվազն լրացուցիչ երաշխիք կստեղծի կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունք կիրառելու համար, քանի որ ինքը հնարավորություն կունենա միևնույն փաստական հանգամանքների պայմաններում իր նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու դեպքում ներկայացնելու համապատասխան հակափաստարկներ: Գործող իրավակարգավորումներով գրկված է այս հնարավորությունից, քանի որ օբյեկտիվորեն կարող է չիմանալ քրեական գործ հարուցված լինելու մասին:

Այս համատեքստում պաշտպանության իրավունքը միևնույն ժամանակ քրեական դատավարության խնդիրների, մասնավորապես՝ հանցավոր արարքին վերաբերող պետական իշխանության ինքնիրավ գործողություններից և չարաշահումներից անձի պաշտպանության, ինչպես նաև անօրինական կամ իրավունքների և ազատությունների առանց անհրաժեշտության այլ սահմանափակման չենթարկվելու սկզբունքի իրացման միջոցներից է:

Հիշյալ հարցի կապակցությամբ Արտիկոյի գործով Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիան կոչված է երաշխավորելու ոչ թե տեսական և պատրանքային, այլ գործնականում և արդյունավետ իրականացվող իրավունքներ: Ղա հատկապես վերաբերում է պաշտպանության իրավունքին<sup>1</sup>:

Գոյություն ունի նաև հակառակ տեսակետը: Այսպես, Օ.Ա. Չայցևը և Պ.Ա. Սմիռնովը գտնում են, որ անձի անմիջական ներգրավումը քրեադատավարական գործունեության մեջ քրեական գործ հարուցելու մասին որոշում ընդունելու դեպքում տեղի չի ունենում<sup>2</sup>: Չհամաձայնելով դիրքորոշմանը՝ գտնում ենք, որ դրանք արդարացված չեն և չեն բխում «մեղադրանք» եզրույթի դատավարական հստակ մեկնաբանությունից: Միևնույն ժամանակ չենք կարող հերքել նաև այն փաստը, որ քրեադատավարական գործող կարգավորումների համաձայն՝ քրեական գործ հարուցելու մասին որոշումն ինքնին ենթադրաբար հանցանք կատարած անձին դատավարական կարգավիճակ տալու հիմք չի դառնում: Ուստի գտնում ենք, որ քրեական գործ հարուցելու որոշման մեջ անձի տվյալները նշելը, այլ կերպ՝ անձի նկատմամբ քրեական գործ հարուցելը վկայում է նրա կողմից հանցագործություն կատարելու կասկածի առկայության մասին, ուստի բովանդակային տեսանկյունից անձը դառնում է կասկածյալ, քանի որ նրա նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում, սակայն միաժամանակ բացակայում են բավարար հիմքեր տվյալ անձին որպես մեղադրյալ ներգրավելու և դատավարական իրավունքների ամբողջ համալիրով օժտելու համար:

<sup>1</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Արտիկոն ընդդեմ Իտալիայի (Artico v. Italy)* գործով վճիռ, 1980թ. մայիսի 13, կետ 33:

<sup>2</sup> Տե՛ս **Зайцев О.А., Смирнов П.А.** Подозреваемый в уголовном процессе. - М., 2005թ., էջ 65:

Այդ առիթով Ա.Մ. Լարինը գրել է. «Պարզ չէ, թե նման իրավիճակում քննիչը երբ է պարտավոր պարզաբանել կասկածյալին նրա իրավունքները, մասնավորապես ցուցմունքներ տալու կամ չտալու իրավունքը, պաշտպան ունենալու իրավունքը և այլն, նաև ինչպես ապահովել այդ իրավունքների իրականացումը»<sup>1</sup>:

Գտնում ենք, որ հիշյալ տարակարծությունները և իրավակիրառ պրակտիկայում առկա խնդիրները հնարավոր է լուծել միայն օրենսդրական նոր կարգավորումներ սահմանելու դեպքում: Մասնավորապես առաջարկում ենք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածը լրացնել հետևյալ դրույթով. «Կոնկրետ անձի նկատմամբ քրեական գործ հարուցելու դեպքում վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է գրավոր ծանուցել նրա կողմից հանցագործություն կատարելու վերաբերյալ առկա կասկածանքի մասին՝ միևնույն ժամանակ պարզաբանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված՝ կասկածյալի դատավարական իրավունքներն ու պարտականությունները»:

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ, պաշտպանության իրավունքի պատշաճ ապահովման անհրաժեշտությունից բացի, շատ կարևոր է անձի նկատմամբ քրեական գործ հարուցելիս այդ մասին վերջինիս տեղեկացնելը նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի մեկնաբանման տեսանկյունից, համաձայն որի՝ «Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե (...) անձի նկատմամբ կա նույն մեղադրանքով քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի չվերացված որոշում (...)»: Այս նորմի բովանդակությունից հետևում է, որ անձի նկատմամբ որոշակի մեղադրանքով քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին որոշման առկայությունը բացառում է նույն անձի նկատմամբ նույն մեղադրանքով քրեական գործ հարուցելու կամ քրեական հետապնդում իրականացնելու հնարավորությունը: Այլ խոսքով՝ քանի դեռ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին որոշումը վերացված չէ, նույն անձը նույն մեղադրանքով քրեական պատասխանատվության ենթարկվել չի կարող: Ակնհայտ է, որ տվյալ դեպքում անձի վերաբերյալ քրեական գործ հարուցելու որոշման մասին անձին ծանուցելը կնպաստի մարդու իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը հնարավոր խախտումներից և կամայականություններից:

Այս համատեքստում առավել առանցքային նշանակություն ունի մեղայականով ներկայանալու՝ որպես քրեական գործի հարուցման առիթի ուսումնասիրության հարցը, որի աղբյուրը ենթադրյալ հանցանք կատարած անձն է, որի վերաբերյալ հետազայում հարուցվելու է քրեական գործ:

Քրեադատավարական կարգավորումներից ուղղակիորեն բխում է, որ անձն իրավունք ունի ներկայացնելու ոչ միայն այլ անձանց, այլ նաև իր կողմից կատարված կամ նախապատրաստվող հանցագործության մասին հաղորդում: Երկրորդ դեպքում այն դիտվում է որպես մեղայականով ներկայանալ, որը Վ.Ա.Լինովսկին բնորոշում է որպես հաղորդում ինքն իր դեմ<sup>2</sup>:

Որպես ինքնուրույն առիթ՝ մեղայականով ներկայանալը առանձնացնելու անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ այն ունի երկակի բնույթ: Մի դեպքում այն դիտվում է որպես քրեական գործ հարուցելու առիթ, մյուս դեպքում՝ քրեական պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք: Նշված հարցի վերաբերյալ Վ.Ա.Լազարևան նշել է, որ հանցանք կատարած անձի տված բանա-

<sup>1</sup> Ларин А.М., Мельников Э.Б., Савицкий В.М. Уголовный процесс России / Под ред. В.М. Савицкого. - М., 1997. էջ 157

<sup>2</sup> Ст'ю Линовский В.А. Опыт исторических разысканий о следственном уголовном судопроизводстве в России. М., 2001, էջ 141:

վոր կամ գրավոր հաղորդումը, այն է՝ մեղայականով ներկայանալը, դատավարական բնույթի է այնպես, ինչպես կասկածյալի, մեղադրյալի ցուցմունքները<sup>1</sup>: Համակարծիք լինելով այս դիրքորոշմանը՝ գտնում ենք, որ մեղայականով ներկայանալն իր բնույթով և բովանդակությամբ կարելի է հավասարեցնել կասկածյալի, մեղադրյալի տված ցուցմունքներին՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանք քրեական դատավարության հետագա փուլերում անառարկելիորեն հնարավոր է լինելու օգտագործել:

Մեղայականով ներկայանալը քրեադատավարական նշանակություն ունենալ և որպես քրեական գործի հարուցման առիթ կարող է դիտվել միայն այն դեպքում, երբ իրավապահ մարմինները տեղյակ չեն հաղորդման մեջ նշված հանցագործության մասին: Վերջին դեպքում մեղայականով ներկայանալը հաղորդում է, որի միջոցով իրավապահ մարմինները տեղեկանում են հանցավոր արարքի մասին:

Վերը շարադրվածից հետևում է, որ եթե անձը մեղայականով ներկայանում է այն ժամանակ, երբ արդեն գոյություն ունի հարուցված քրեական գործ, ապա նրա դիմումը չի կարող դիտվել որպես քրեական գործ հարուցելու առիթ, և հետևաբար չի ունենա քրեադատավարական նշանակություն: Տվյալ դեպքում մեղայականով ներկայանալը կունենա միայն քրեաիրավական նշանակություն՝ որպես քրեական պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք:

Գտնում ենք, որ «մեղայականով ներկայանալ» ձևակերպումը ոչ իրավաչափորեն սահմանափակում է դրա բովանդակությունը, մասնավորապես այն դեպքերում, երբ անձն ի վիճակի չէ ներկայանալ վարույթն իրականացնող մարմին, օրինակ՝ հիվանդության, արտասահմանում գտնվելու և այլ պատճառներով, սակայն գրավոր դիմում է ներկայացնում, որով հայտնում է իր կողմից նախապատրաստվող կամ կատարված հանցագործության մասին: Գործող իրավակարգավորումների պայմաններում վարույթն իրականացնող մարմինը օբյեկտիվորեն զրկված է ներկայացված հաղորդումը որպես քրեական գործ հարուցելու առիթ դիտելու հնարավորությունից: Ուստի առաջարկում ենք մեղայականով ներկայանալու փոխարեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում սահմանել «մեղայականի մասին դիմում» հասկացությունը, որի դեպքում օրենքով սահմանված կանոնների պահպանմամբ ներկայացված դիմումն արդեն իսկ կդիտվի օրինական առիթ, և դրա հիման վրա կկատարվեն դատավարական համապատասխան գործողություններ: Արդյունքում անձը հնարավորություն կունենա ինչպես անձամբ ներկայանալ վարույթն իրականացնող մարմնին, այնպես էլ պատշաճ կարգով մեղայականի մասին դիմում հղել՝ առանց ներկայանալու:

Առաջարկվող փոփոխությունը հիմնավոր է նաև այն առումով, որ հանցագործության մասին առիթը գրավոր կամ բանավոր շարադրված փաստաթուղթ է, որում նկարագրված են ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասով նախատեսված որևէ հանցագործության հատկանիշներ: Այսինքն, այդտեղ որևէ կերպ չի կարող ներառվել ենթադրյալ հանցանք կատարած անձի՝ վարույթն իրականացնող մարմնին ներկայանալը, ինչպես նաև այն չի զրկում նրան քննությունից թաքնվելու հնարավորությունից: Հարկ է հիշել, որ մեղայականի մասին դիմումը ընդամենը քրեական գործ հարուցելու առիթ է, իսկ հանցավորի հետագա վարքագծի նկատմամբ քրեաիրավական արձագանքը կարգավորվում է այլ նորմերով, օրինակ՝ բավարար հիմքերի առկայության դեպքում անձի նկատմամբ խափանման միջոց կիրառելով և այլն:

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ մեղայականի մասին դիմումը անձը կարող է ներկայացնել ինչպես երրորդ անձանց, այնպես էլ ուղարկել փոստային կապի միջոցով, եթե պահպանվել են դրան ներկայացվող պահանջները:

<sup>1</sup> Տե՛ս **Лазарева В.А.** Доказывание в уголовном процессе. – М., 2009, էջ 190:

Մեղայականով ներկայանալու դեպքում առաջնահերթ կարևորություն ունեն իրավասու մարմին ներկայացած անձի իրավունքների և օրինական շահերի ապահովումը, պաշտպանության իրավունքի կենսագործման համար իրական հնարավորություն ընձեռելը, քանի որ անձի նկատմամբ բովանդակային առումով քրեական հետապնդում է իրականացվում մինչև քրեական գործի հարուցումը: Առաջին հերթին անձը պետք է տեղեկացվի ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված՝ մեղադրյալի նվազագույն իրավունքների մասին, մասնավորապես իր փաստաբանին հրավիրելու (ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդված), լռելու (ՀՀ Սահմանադրության 65-րդ հոդված) իրավունքների մասին: Բացի այդ՝ իրավապահ մարմինը պարտավոր է բացատրել դրա քրեադատավարական և քրեաիրավական հետևանքները, մասնավորապես այն, որ մեղայականով ներկայանալու մասին կազմված արձանագրությունը կարող է օգտագործվել նրա դեմ որպես ապացույց քրեական գործի հետագա քննության ընթացքում: Ինչպես նշում է Ն.Ի.Գազետոդինովը, մեղայականով ներկայանալը գործնականում հաճախ հոգեբանական, երբեմն էլ ֆիզիկական ճնշման արդյունք է<sup>1</sup>: Նման ճնշումը բացառելու նպատակով պետք է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածով նախատեսել մեղայականով ներկայանալու դեպքում պաշտպանի (փաստաբանի) պարտադիր մասնակցություն, ինչն էականորեն կչեզոքացնի իրավունքի հնարավոր խախտումների վտանգը և արդյունավետ պաշտպանություն իրականացնելու հնարավորություն կստեղծի:

Մեղայականով ներկայացող անձը պետք է գիտակցի, որ իր կողմից նկարագրված արարքը հանցագործություն է: Իսկ թե իր արարքը ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի որ հոդվածով է նախատեսված, կամ ինչ քրեական պատասխանատվություն է նախատեսված դրա համար, ապա դա պարտադիր պայման չէ:

Նշենք նաև, որ մեղայականի մասին դիմումը ևս պետք է օրենքով սահմանված կարգով ստուգվի՝ անկախ այն հանգամանքից, որ ներկայացվել է ենթադրյալ հանցանք կատարած անձի կողմից: Չպետք է անտեսել նաև, որ տվյալ անձը ևս օգտվում է անմեղության կանխավարկածից, և նա անմեղ է այնքան ժամանակ, քանի դեռ նրա մեղքը չի հաստատվել դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Դեռ ավելին, չեն բացառվում նաև այնպիսի իրավիճակներ, երբ մեղայականով ներկայացած անձը, դիտավորյալ կամ այլ հանգամանքներով պայմանավորված, խեղաթյուրում է իրականությունը՝ ցանկանալով քողարկել իրական մեղավորներին և զերծ պահել նրանց քրեական պատասխանատվությունից, կամ մեղայականով ներկայացել է բռնություն գործադրելու կամ դրա գործադրման սպառնալիքի ազդեցության տակ:

Գտնում ենք, որ մեղայականով ներկայացող անձը ևս պետք է նախագգուշացվի ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածով նախատեսված սուտ մատնության համար ծագող քրեական պատասխանատվության մասին, եթե իր հաղորդված տեղեկությունները վերաբերում են այլ անձանց կողմից նախապատրաստված կամ կատարված հանցագործություններին, այդ թվում նաև իր ենթադրյալ հանցակիցներին: Հաղորդման այս մասի նկատմամբ կիրառելի են ոչ թե մեղայականով ներկայանալու, այլ ֆիզիկական անձի կողմից հանցագործության մասին հաղորդում ներկայացնելու կարգը սահմանող կանոնները:

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ խնդրո առարկա հարցերի կապակցությամբ համանման իրավակարգավորումներ են նախատեսված նաև ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով, սակայն որևէ կերպ անդրադարձ չի կատարվել ինչպես այն դեպքերին, երբ քրեական վարույթ նախածեռնելու մասին արձանագրության մեջ ենթադրյալ հանցանք կատարած անձի մասին մատ-

<sup>1</sup> Стів Газетдинов И.Н. О законодательной регламентации поводов и основания для возбуждения уголовного дела // Российский следователь. 2007. № 20. էջ 19:

նանշվում են կոնկրետ տվյալներ, այնպես էլ մեղայականով ներկայանալու՝ որպես քրեական վարույթ նախաձեռնելու ինքնուրույն առիթի քրեադատավարական առանձնահատկություններին:

Ամփոփելով գտնում ենք, որ գործող իրավակարգավորումներում վերը մատնանշված առաջարկների օրենսդրական ամրագրումն առավել արդյունավետ կդարձնի քրեական գործի հարուցման փուլում ենթադրյալ հանցանք կատարած անձանց իրավունքների և օրինական շահերի արդյունավետ կենսագործումը՝ զերծ պահելով դրանք հնարավոր խախտումներից:

## ПРАВА И ЗАКОННЫЕ ИНТЕРЕСЫ ЛИЦА ПРЕДПОЛОЖИТЕЛЬНО СОВЕРШИВШЕГО ПРЕСТУПЛЕНИЕ, НА СТАДИИ ВОЗБУЖДЕНИЯ УГОЛОВНОГО ДЕЛА

**Тигран Казарян**

*Аспирант кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ*

Согласно действующим уголовно-процессуальным регулированиям, в случае наличия повода и основания возбуждения для уголовного дела прокурор, следователь, орган расследования принимают решение возбудить уголовное дело. В уголовном процессе РА уголовное дело возбуждается по поводу деяния (деяний) предположительно содержащего их признаки преступления, запрещенного Уголовным кодексом РА, иными словами: по поводу факта, а возбуждение уголовного дела в отношении лица не предусмотрено в Уголовно-процессуальном кодексе РА.

Несмотря на это, проваприменительной практике в решении возбуждения уголовного дела часто указывается конкретный человек, между прочем, в формулировках типичных для вынесения постановления о привлечении лица в качестве обвиняемого или даже во время составления обвинительного постановления, порождая конкретные правовые последствия для лица. Следовательно, в контексте изучения стадии инициирования уголовного производства, важно также обратить внимание и на изучение представленной проблемы.

## THE RIGHTS AND LEGITIMATE INTERESTS OF THE PERSON ALLEGED TO HAVE COMMITTED A CRIME AT THE STAGE OF INSTITUTION OF CRIMINAL PROCEEDING

**Tigran Ghazaryan**

*PhD Student at the YSU Chair of Criminal  
Procedure and Criminalistics*

According to the existing criminal-procedural regulations in case of presence of the circumstances and grounds for initiating a criminal case the prosecutor, the investigator and the investigative body make a decision to institute a criminal case. In

Armenian criminal proceeding the criminal case is instituted on the occasion of supposedly done action (actions) containing crime elements, in other words, on the fact, but the institute of filing a criminal case against a person is not envisaged by Criminal Procedure Code of RA.

Despite that, in law enforcement practice in the decision of instituting a criminal case often a concrete person is mentioned as the committer of the crime, by the way, using affirmative statements distinctive to the decision of involvement as an accused or even to the accusatory verdict causing concrete legal consequences for the mentioned person.

Hence, in the context of the study of initiating criminal proceeding it is important to refer to research of presented problem too.

**Բանալի բառեր** – քրեական վարույթ նախաձեռնել, ենթադրյալ հանցանք կատարած անձ, քրեական գործ հարուցել, դատական վերահսկողություն, կրկին անգամ դատվելու անթույլատրելիություն

**Ключевые слова:** инициировать уголовное производство, лицо, предположительно совершившее преступление, возбуждение уголовного дела, судебный надзор, недопустимость двойного привлечения к уголовной ответственности

**Key words:** initiate criminal proceedings, person alleged to have committed a crime, institution of a criminal case, judicial supervision, acknowledgement of guilt, criminal prosecution, impermissibility of double jeopardy